

ներք, որոնցից հետո տրված են վերնագրերը: Դա կհնչեցներ գրքի ընթերցումը և տեղեկությունների որոնումը: Հատորն ունի ուսանողների ընդարձակ ամփոփում, համառոտագրություն-

ների, անձանունների, տեղանունների, ցեղանունների, առարկայական ցանկեր:

Ա. Պ. ՓՈԼԱՌՅԱՆ

DEFTER-İ CABA-I EYALET-İ ÇILDIR 1694—1732 yy.

ՉԼԻԸՐԻ ԷՅԱԼԵԹԻ ՋԱԲԱ ԳԱՖԹԱՐԸ. քուրճեքեն բնագիրը վրացերեն թարգմանությամբ, ուսումնասիրությամբ հանդերձ, հրատարակության պատրաստելը Մ. Խ. Սվանիձեն. Թբիլիսի, 1979:

Վերջին տասնամյակներում վրաց արևելագետները մեծ ուղադրություն են դարձնում XVI—XVIII դդ. թուրքական պաշտոնական վավերագրերի վերծանման ու հրատարակման գործին: Հրատարակված աշխատությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում 1947 թ. Թբիլիսիում լույս տեսած «Գյուրջիստանի վիլայեթի մանրամասն դաֆթարը (գրանցման մատյանը)»: Դաֆթարներ էին կոչվում Օսմանյան կայսրության (ինչպես նաև այլ արևելյան երկրներում) կառավարության հրամանով պարբերաբար հատուկ հաշվառման (tahrir) միջոցով կատարվող գրանցման մատյանները: Դաֆթարների հսկայական գիտական նշանակությունը բազմիցս ընդգծել են թուրք ու եվրոպացի համարյա բոլոր արևելագետ թուրքագետները: Եթե երբեմն գիտական հասարակայնությունը հայտնի դառնա թուրքական պետական արխիվներում առ այսօր պահպանված Արևմտյան Հայաստանի նահանգներին ու գավառներին վերաբերող դաֆթարների բովանդակությունը, ապա շատ հարցեր կլուսաբանվեն նորովի:

«Չլիզրի էյալեթի ջաբա դաֆթարի» մեջ առաջին անգամ տրվում են Ախալցխայի փաշալուքյան թուրքական պետական հաշվառումը (սեկստրը), վավերագրերի վրացերեն թարգմանությունը ծանոթագրություններով ու առաջաբանով: Բուն վավերագիրը գտնվում է Սոֆիայում, Կիրիլի ու Մեֆոդիի անվան ժողովրդական գրադարանի արևելյան բաժնում: Անհրաժեշտ է նշել, որ XVI—XVIII դդ. վերաբերող գրանցման այլ մատյաններ ևս, ինչպես պարզվում է Չլիզրի էյալեթի սույն դաֆ-

թարից և բուլղար թուրքագետների բազմաթիվ աշխատություններից, պահվում են վերոհիշյալ գրադարանում: Ժամանակն է, որ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան նույնպես ձեռնամուխ լինի այդ գործին: Մեզանում առայժմ, եթե նրկատի շունհանը Հ. Դ. Փափազյանի հրատարակած «1725—1728 թթ. Վաղարշապատ գյուղի թուրքական հարկամատյանները» վավերագրերը, փաստորեն այլ աշխատություն հրապարակի վրա գոյություն չունի: Անկարայի և Ստամբուլի պետական արխիվներում ներկայումս պահվում են 254 ընդարձակ (defter-i muhtassa) և 116 համառոտ (defter-i muhtasar) դաֆթարներ: Մեծ քանակությամբ դաֆթարներ պահպանվել են նաև եվրոպական երկրներում, մասնավորապես Բալիաններում:

Չլիզրի էյալեթի ջաբա (ջաբա արաբերեն նշանակում է հարկ, հարկերի գանձում) դաֆթարը պարունակում է նաև Կարսի և Տրապիզոնի գրանցման մատյանները: «Ջաբա դաֆթարում» իրենց արտահայտությունն են գտել Չլիզրի էյալեթում ավատների՝ խասսերի, ղեամեթների ու թիմարների քաշման մասին համապատասխան վկայություններ: Վերջինները նշված են հակառակ հանվան: Դաֆթարը գրանցված է ժամանակագրական կարգով՝ 1694 թ. սկսած մինչև 1732 թ.:

«Դաֆթար-ի ջաբա»-ն աղբյուր է ոչ միայն Չլիզրի էյալեթի, այլև ողջ կայսրության, ներառյալ նաև Արևմտյան Հայաստանի, ավատատիրական հարաբերությունների ուսումնասիրության համար: Այստեղ արձանագրված են 17 խասսեր (խասսերից ստացված տարեկան եկամուտը կազմում էր 100000 ափսիս և ավելի²), 90 ղեամեթներ (ղեամեթի տարեկան եկամուտը ավատատիրոջ օգտին կազմում էր 20 հազարից

¹ Пространный реестр Гюрджистанского вилайета. Турецкий текст издал, перевел, исследованием и комментариями снабдил С. С. Джанкия. Кн. I, текст. Тбилиси, 1947. Ներկայումս Ս. Ս. Զիկիրի հրատարակության է պատրաստում «1727 թ. Կարթլիի վիլայեթի ընդարձակ դաֆթարը»:

² Ափսիս (akce) թուրքական արծաթ դրամի միավոր է: Ափսիս հայերեն նշանակում է սպիտակ: Առաջին օսմանյան ափսիսները կոչում էին քառորդ մաքսալ (1/2 գր. արծաթ):

մինչև 100 հազար ազնի և ավելի) և 767 թիմարներ (3 հազարից մինչև 20 հազար տարեկան եկամուտ բերող ավատներ)։ Այս տվյալները հիմնականում համապատասխանում են XVII դարի թուրք պատական պաշտոնական պատմագիր Այնի Ալիի և թուրք հանրահայտ հանապարհորդ էվլիա Չելերու հաղորդած վկայություններին։ Մեկ առ մեկ թվարկված են Ձրլղրի էյալեթի մեջ մտնող փոքր վարչական միավորների՝ նահիյաների, կադաների, գուլլերի անունները։

«Դավթար-ի ջաբա»-ի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Ձրլղրի էյալեթում գերակշռել է խոշոր ավատատիրական հողատիրությունը (մշակելի հողերի մոտ 60 տոկոսը)։ Այնտեղ եղել են ավատատերեր, որոնց տարեկան եկամուտը կազմել է 500 հազար ազնի։

«Դավթար-ի ջաբա»-ում առանձնակի ուշադրության են արժանի յուրթուկների և օջակլըկների³ մասին եղած վկայությունները։ Մի անգամ ես հաստատվում է այն հանրահայտ պատմական փաստը, որ յուրթուկներ և օջակլըկներ հղել են ոչ միայն Քրդստանում և քրդական բնակիչ իշխանության ոլորտն ընկած Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում, այլև Ձրլղրի էյալեթում, Արևմտյան Վրաստանում ու Ռայկաններում։ Ձրլղրի էյալեթում օջակլըկների ու յուրթուկների տարածված լինելը բացատրվում է այն հանգամանքով, որ այստեղ մահմեդականությունն ընդունած որոշ վրացի ավատատերեր հավատարմորեն ծառայում էին սուլթանական կառավարությանը։ Պիտի ենթադրել, որ «Դավթար ջաբա»-ում հիշատակված ավատատերերի մի զգալի մասը, շնայած կրոնի մահմեդական անուններ, ծագումով եղած լինի վրացի և կամ նույնիսկ, չի բացառված, հայ,

քանզի վավերագրում ոչ հազվագյուտ հիշատակվում են նաև հայկական ծագում ունեցող գյուղերի, շրջանների անուններ։ Մյուս կողմից, յուրթուկների և օջակլըկների Ձրլղրի էյալեթում տարածված լինելը բացատրվում է նաև սուլթանական կառավարության որոշ անգործությամբ, երբ նա ստիպված էր զիջումների գնալու հօգուտ վրաց ավատատերերի։

«Դավթար-ի ջաբա»-ի ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունը հետազոտողին հնարավորություն կտա ավելի ևս խորանալու Օսմանյան կայսրության XVI—XVIII դդ. հասարակական-տնտեսական կյանքի այլևայլ բնագավառներում։ Սկզբնաղբյուրը խիստ արժեքավոր է նաև պատմական աշխարհագրության տեսակետից։

Աշխատությունն ունի վրացերեն ընդարձակ առաջաբան, որի համառոտությունը տրված է նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով։ Առաջաբանը, որի հեղինակն է վրաց հայտնի թուրքագետ Մ. խ. Սվանիձեն, գրված է գիտական պատշաճ բարեխղճությամբ։ Այնտեղ մանրամասն խոսվում է օսմանյան դաֆթարների ուսումնասիրության արգի վիճակի և անցյալում դաֆթարների ուսումնասիրության մասին Թուրքիայում, Եվրոպայում, Ռուսաստանում և սովետական պատմագրության մեջ։

Առաջաբանի հեղինակը մասնագետների ուշադրություն է հրավիրում դավթարների ուսումնասիրելու բնագավառում մասնագետների հետագա անելիքների կարևորության վրա։ Աշխատության մեջ տրված է վավերագրի ֆաբսիմիլեն և նրա վերծանումը։ Կատարված է վավերագրի վրացերեն թարգմանությունը, որը համապատասխանում է ընադրին։ Օսմանյան ձեռագրերի հայտնի դիտակ Կ. Ա. Աբուլաձեն հաղթահարել է ձեռագրային բազմաթիվ բարդություններ (խոսքը վերաբերում է նախ և առաջ տեղագրական նյութերին)։

Հրատարակելով «Ձրլղրի էյալեթի դավթար-ի ջաբա»-ն, հեղինակները կատարել են շնորհակալ աշխատանք։ Ցանկալի կլինի, որ նման արժեքավոր վավերագրեր հրատարակվեն նաև ռուսերեն թարգմանությամբ։

Մ. Կ. ԶՈՒԱԼՅԱՆ

3 Յուրթուկը, օջակլը համապատասխանում են հայերեն «հայրենիք»-ին։ XVI դարի Բիթլիսի էմիր, քուրդ պատմագիր Շարաֆնա-նը այս տիպի հողատիրությունը համարում էր ժողովրդական սեփականություն և հաճախ յուրթուկի և օջակլըկի փոխարեն օգտագործում է «թեմիք» (սեփականություն) տերմինը, քանզի այդ հողերը եղել են ժողովրդական։